ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՀԵՌԱԳՐԵՐ

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹՅՈՒՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ Տ. Տ. ԳԵՈՐԳ Զ. ՍՐԲԱԶՆԱԳՈՒՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԾՆՆԴՅԱՆ 80-ԱՄՅԱ ԵՎ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ-ՎԱՐՉԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ-ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ, ԵՐԱԺՇՏԱԿԱՆ-ԽՄԲԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ 60-ԱՄՅԱ ՀՈԲԵԼՅԱՆԻ ԱՌԹԻՎ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՌԱԳՐԵՐԸ

ՇՆՈՐՀԱՁԱՐԴ ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Անթիլիաս, Բեյրութ

Սուրբ Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհուրդը 1950 թվին կազմակերպում է Վեհափառ Հայրապետի ծննդյան 80-ամյա և եկեղեցական, հասարակական և մանկավարժական գործունեության 60-ամյա հոբելյանը: Սփյուռքի թեմերում, ի բաց առյալ երկու Պատրիարքությունների, հոբելյանական տոնի կազմակերպումը Ձեզ է հանձնված: Ծրագիրը կուղարկվի:

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ

ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ՝ ԵՂԻՇԵ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ ՏԵՐՏԵՐՅԱՆԻՆ

Երուսաղեմ

Սուրբ Էջմիածնի Գերագույն Հոգևոր Խորհուրդը 1950 թվին կազմակերպում է Վեհափառ Հայրապետի ծննդյան 80-ամյա և եկեղեցական, հասարակական և մանկավարժական գործունեության 60-ամյա հոբելյանը: Երուսաղեմի Պատրիարքության շրջանում, հոբելյանական տոնի կազմակերպումը հանձնված է Ձեզ: Մանրամասն հրահանգը կուղարկվի:

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ

ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ՝ Տ. ԳԵՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՐՍԼԱՆՅԱՆԻՆ

Կ. Պոլիս

Սուրբ Էջմիածնի Գերագույն Հոգևոր խորհուրդը 1950 թվին կազմակերպում է Վեհափառ Հայրապետի ծննդյան 80-ամյա և եկեղեցական հասարակական ու մանկավարժական գործունեության 60-ամյա հոբելյանը: Թուրքիայում հոբելյանական տոնի կազմակերպումը հանձնված է Ձեզ: Մանրամասն հրահանգը կուղարկվի:

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐ ԲՈԼՈՐ ԹԵՄԵՐԻՆ

Ս. Էջմիածնի Գերագույն Հոգևոր խորհուրդը 1950 թվին կազմակերպում է Վեհափառ Հայրապետի ծննդյան 80-ամյա և եկեղեցական, հասարակական և մանկավարժական գործունեության 60-ամյա հոբելյանը: Սփյուռքի հոբելյանական կենտրոնական Հանձնաժողովի նախագահ նշանակված է Մեծի Տանն Կիլիկիո Շնորհազարդ Գարեգին Կաթողիկոսը: Նրան է հանձնված Սփյուռքի բոլոր թեմերում հոբելյանական տոների կազմակերպումը, թեմական առաջնորդների նախագահությամբ, ի թաց այլ երկու Պարհարքությունների: Մանրամասն հրահանգը կուղարկվի:

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՐԴ

ԵՂԻՇԵ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԵՐՏԵՐՅԱՆԻ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏԻՐԱՐՔԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ԸՆՏՐՎԵԼԸ

Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Երուսաղեմի Հայոց Պատրիարքարանից ստացված հեռագրի համաձայն, Սրբոց Հակոբյանց վանքի միաբանական ընդհանուր ժողովի կողմից Պատրիարքական Տեղապահ է ընտրվել լուսարարապետ Եղիշե վարդապետ Տերտերյանը:

Նորին Ս. Օծություն Տ. Տ. Գեորգ Զ. Կաթողիկոսը շնորհավորական հեռագրով հաստատել է Տեղապահի ընտրությունը: